Նանա Իոսելիանի
Սոփիո Քեբուրիա

Արվեստ 8



Երաշխավորվել է Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից, 2020 թվականին:

 სულაკაურის
გამომცემლობა

Արվեստ 8

Աշակերտի գիրք

 სულაკაურის
გამომცემლობა

Բովանդակություն

1 Հասարակությունը և արվեստը

Ռենե Մագրիտ
«Գոլկոնդա», 1953 թ.

	Արվեստը հասարակության ծառայության մեջ	7
1.	Ժամանակակից հասարակության մարտահրավերները	8
2.	Արվեստը քաղաքականության ծառայության մեջ	10
3.	Արվեստն ընդդեմ պատերազմի	18
4.	Արվեստը սոցիալական խնդիրների մասին	26
5.	Արվեստը կրոնի ծառայության մեջ	34
6.	Նոր պատկերավորման լեզու	40
7.	Քրիստոնեական Վրաստանը	52
8.	Իսլամական արվեստը	62
9.	Նկարչություն	68
10.	Պարսկական խեցեղենը	76
11.	Արվեստը կրթության ծառայության մեջ (գեղագրություն)	78
12.	Մանրանկարչություն	80
13.	Քրիստոնեական պաշտամունքային ճարտարապետությունը	90
14.	Արևմտյան Եվրոպայի պաշտամունքային ճարտարապետությունը	100
15.	Կրոնական դեկոր	108

1 Հասարակությունը և արվեստը

Ռենե Մագրիտ
«Գոլկոնդա», 1953 թ.

Արվեստը հասարակության ծառայության մեջ

- Ի՞նչ կարելի է իմանալ արվեստի միջոցով տարբեր դարաշրջանների և մշակույթների հասարակությունների մասին:
- Ի՞նչ գործոններ են ազդում արվեստի գործի արտաքին տեսքի վրա:
- Գեղարվեստական ի՞նչ միջոցներով է արվեստը մեզ պատմում որևէ պատմություն:
- Ինչի՞ն է ծառայում արվեստը տարբեր դարաշրջաններում:
- Ինչո՞վ է տարբերվում տարբեր ժամանակների հասարակությունների կողմից ստեղծված արվեստն իրարից:
- Ո՞րն է արվեստի դերը հասարակության կյանքում:
- Ի՞նչ դեր է կատարում հասարակությունն արվեստի ձևավորման մեջ:
- Ինչպե՞ս կարող ենք արվեստի գործի միջոցով որևէ երևույթի նկատմամբ հաղորդել մեր վերաբերմունքը:
- Այսօր մեզ ինչո՞ւմ պիտանի կլինի վաղ դարաշրջանների գեղարվեստական փորձի իմացությունը:

Հասարակության աշխարհայացքը սահմանում է նրա արվեստը, իսկ արվեստն այս աշխարհայացքին տեսանելի տեսք է հաղորդում:

Հասարակության հավատն արտացոլվում է համաժամանակյա արվեստում, իսկ արվեստը ծառայում է այս գաղափարների տարածմանն ու հաստատմանը:

Բոլոր մարդիկ միանման են՝ մենք ունենք մեկ գլուխ, երկու ձեռք և երկու ոտք, բայց երկու միանման անձ գոյություն չունի: Տարբեր բաներ են մեզ հուզում, տարբեր բաների ենք հավատում: Հասարակությունը, տարբեր ժամանակներում տարբեր մարտահրավերների բախվելով, ստիպված էր տարբեր խնդիրներ լուծել: Դժվարությունները երբեմն խաղաղությամբ էր հաղթահարում, երբեմն՝ զենքով:

Աստիճանաբար մարդկության պատմությունը վերածվեց պատերազմների և մարտերի երկար շղթայի: Միգուցե արվեստը միավորի մեզ, միմյանց մշակույթը հարգելու ունակությունը մեզ այս փոքրիկ մոլորակի վրա գտնել տա խաղաղ համակեցության ուղին:

– Ի՞նչն է մարդուն տարբերում այլ կենդանի արարածներից:

– Ստեղծագործելու կարողությունը:

Այս կարողության դրսևորման տեսակներից մեկը կերպարվեստն է:

Յուրաքանչյուր դարաշրջան առանձնանում է իր ընդգծված հետաքրքրություններով: Արվեստը, որպես ժամանակի հայելի, այս հետաքրքրությունների արտահայտիչն է:

Արվեստը երբեմն ծառայում է քաղաքականությանը, երբեմն՝ կրոնին, երբեմն՝ առևտրին, երբեմն ՝ կրթությանը, ժամանցին և հանգստին: Հասարակությունը ստեղծում է արվեստ, իսկ արվեստն ստեղծում է այն միջավայրը, որում ապրում է հասարակությունը: Դրանք փոխկապակցված են: Դա փոխկապակցված, երկկողմ գործընթաց է, որում չես կարող ասել՝ սկզբում հա՞վն է եղել, թե՞ ձուն:

1. Ժամանակակից հասարակության մարտահրավերները

Բառարան

Կապելլա – փոքր չափի աղոթարան, մատուռ:

Ինչպիսի՞ն է հասարակությունն այսօր: Ինչպես միշտ. քաղաքական, տնտեսական կամ կրոնական հողի վրա ծագած հակամարտություններ, հեղափոխություններ, պատերազմներ ... Ժամանակակից պետությունները հաշտեցման ուղիներ են փնտրում, հասարակությունները փորձում են միավորվել: Արվեստը ճիշտ այն ոլորտն է, որը կարող է տարբեր լեզուներով խոսող մարդկանց միավորել: Գուցե արվե՞ստը փրկի աշխարհը:

Մարկ Ռոթկոյի «Մտքի տաճարը»

XX դարի արվեստագետ Մարկ Ռոթկոյի կապելլան նպատակ է նախանշում տարբեր հավատքներ և հայացքներ ունեցող մարդկանց հաշտեցնել: Այս փոքրիկ «Մտքի մատուռը» գտնվում է ԱՄՆ-ի Տեխաս նահանգի քաղաք Հյուսթոնում: Մատուռի պատերին Մարկ Ռոթկոյին կողմից կատարված, մանուշակագույն-կապտավուն կերպարվեստի կտավներ են կախված: Նրանց գույնը դիտողների վրա կախարդական ազդեցություն է գործում: Քրիստոնյա, հրեա, մահմեդական կամ բուդդայական նստած են կողք կողքի, սուզվում են մտքերի մեջ, խաղաղվում են և տարօրինակ տարածքից դուրս գալիս ավելի բարի ու միմյանց նկատմամբ ներողամիտ: Որպեսզի մեր միջև եղած տարբերությունը, անհամաձայնությունը մեզ չհանգեցնի պատերազմի, պետք է թափանցենք ուրիշի մտածողության, ուրիշի մշակույթի մեջ, սովորենք հարգել տարբեր հասարակությունները: Իսկ դրանում մեզ կօգնի արվեստը: Չէ՞ որ արվեստագետները առանց խոսքի են հասկանում միմյանց: Այսպիսով, եկեք սկսենք ...

Մատուռի ինտերիերը



Ինտերիեր



Ժամանակակից բուդդայական տաճար Հնդկաստանում

1 Առաջադրանք

Դիտի՛ր Լե Կորբուզիեի և Ռոթկոյի տաճարները: Ի՞նչն է մեզ հուշում, որ դրանք 20-րդ դարի գործեր են:

2 Դատողությո՛ւն արա

Ժամանակակից պաշտամունքային ճարտարապետությունը միջնադարի ավանդույթների հետևորդն է:

Ինչպիսի՞ն եք պատկերացնում վրացական պաշտամունքային ճարտարապետությունը՝ ժամանակակից հայացքների, նյութերի և տեխնոլոգիաների նախատեսմամբ:

Ռոնշան մատուռ, Ֆրանսիա, Ճարտարապետ Լե Կորբուզիե

2. Արվեստը քաղաքականության ծառայության մեջ

Բառարան

Բարձրաքանդակ – բարձր ռելիեֆ:

Մարտանկարչական ժանր – պատմական ժանրի ենթատեսակ, որն արտացոլում է մարտական տեսարան:

Քաղաքականություն բառը հունական ծագում ունի: Հին Հունաստանում արժեքների մեջ առաջնահերթ էր համարվում հայրենասիրությունը: Յուրաքանչյուր քաղաքացի պատասխանատվություն էր զգում իր քաղաք-պոլիսի առջև: Պոլիսին անհրաժեշտ էին ֆիզիկապես և հոգեպես հաստատուն, ուժեղ պաշտպաններ: Այս ձգտման վկայություն է նաև արվեստը: Հին հունական քանդակը հենց այսպիսի քաղաքացիական իդեալ է հաստատում՝ ներդաշնակորեն զարգացած մարզիկի իդեալ՝ «Առողջ մարմնում առողջ հոգի»: Այսօրվա հեռանկարից՝ որքանո՞վ ճիշտ ես համարում այս մոտեցումը:

Միրոն, Սկավառականետը, մ.թ.ա. V դ.

Պերգամոնի Զևսի զոհարանի հելլենիստական ռելիեֆն արտացոլում է հսկաների հետ աստվածների պայքարը: Անտիկ պլաստիկայում այս բավականին տարածված առասպելական սյուժեն նվիրված է քաղաքական իրադարձության: Զոհարանը նվիրված է Փոքր Ասիայի թագավոր Եվմենես II-ի կողմից գալերի նկատմամբ տարած հաղթանակին: Կիսակենդանական, վայրի հսկաների մեջ ենթադրվում է բարբարոս գալական ցեղը, իսկ Օլիմպոսի աստվածները մարմնավորում են Պերգամոնի բարձր զարգացած քաղաքացիներին: Այստեղ նույնիսկ առասպելն է կանգնած քաղաքականության ծառայության մեջ:

Պերգամոնի Զոհարանի ռելիեֆը, մ.թ.ա. II դ.

Կոստանդիանոսի հաղթակամարը
Հռոմում, 315 թ.

Հռոմեացիներն իրենց առաջնային պարտականություն էին համարում կայսրության սահմանների ընդլայնումը, նոր հողերի նվաճումը, այլ ժողովուրդների հնազանդեցումը: Նրանք արվեստը պատկերացնում էին միայն ռազմական իշխանության ծառայության մեջ: Նույնիսկ ամֆիթատրոնները, որոնք կարծես ժամանցի համար էին կառուցվում, մարդկանց դաժան տեսարաններ էին առաջարկում՝ արյունահեղությանը ընտելանալու համար:

Կայսրերի ռազմական նվաճումները և կարևոր իրադարձություններն անմահացնելու նպատակով հռոմեացիները սկսեցին հաղթական կամարներ վեր խոյացնել: Կամարները հաճախ զարդարված էին հաղթանակն արտացոլող պատմական ռելիեֆներով:

Կայսրերին նվիրված սյուների մարտական ռելիեֆները նաև պատմական փառաբանական փաստաթղթեր են, այսպես ասած՝ գեղանկարչական քրոնիկոն:

Առևտրի շնորհիվ կայսրերի պատկերներով հռոմեական մետաղադրամներն արագ տարածվում էին ամբողջ կայսրությունում և ծայրամասերում գտնվող գաղութներին տեղեկացնում կառավարողի ինքնության մասին:

Տրայանոսի սյունը, I դ., Հռոմ

Տարբեր ժամանակաշրջանների հռոմեական մետաղադրամներ

Ֆրանսիացի նկարիչ Ժան Օգյուստ Դոմինիկ Էնգրը (1780-1867) իր կուռքին՝ Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Բոնապարտին, ներկայացնում է գերադրական աստիճանում: Նապոլեոնը առասպելական Զևսի նման բարձրամտորեն բազմել է գահին՝ գլխին լուսապսակի պես դրված դափնեպսակով, բարձրացված ձեռքում պահելով իշխանության խորհրդանիշը՝ գավազանը: Թվում է, թե ուր որ է կայծակ է փայլատակելու:

Փառաբանումն ու մեծարումը հաճախ ենթադրում են ճշմարտության գեղեցկացում, անհատի իդեալականացում:

Բառարան

Գաղափարախոսություն – արժեքներ և պատկերացումներ, որոնք սահմանում են մարդկանց վերաբերմունքն իրականության և միմյանց նկատմամբ:

1 Դատողությո՛ւն արա

- Ինչո՞վ է տարբերվում տարբեր ժամանակների հասարակությունների կողմից ստեղծված արվեստն իրարից:
- Ինչի՞ն է ծառայում արվեստը տարբեր դարաշրջաններում:

2 Առաջադրանք

- Ի՞նչ նպատակով են պատկերում արվեստագետները քաղաքական գործիչներին:
- Ի՞նչ գեղարվեստական միջոցների են դիմում նրանք քաղաքական գործիչներին փառաբանելու համար:

Ֆիդիասի Զևսի արձանը Օլիմպոսում, վերականգնվածք

Ժան Օգյուստ Դոմինիկ Էնգր, «Նապոլեոնը կայսերական գահին», 1806 թ.

Ֆրանսիական հեղափոխությանն արձագանքեց XIX դարի ֆրանսիացի նկարիչ Էժեն Դելակրուան: Նրա գեղանկարչական «Ազատությունը բարիկադների վրա» կտավը միավորում է Ֆրանսիական հեղափոխության տարբեր պատմական իրադարձությունների կերպարների: Նրանց առաջնորդում է եռագույն դրոշը վեր ծածանած մի կին: Արվեստի գործը դիտողին, ավելի լավ ապագա ունենալու համար, հեղափոխական պայքարի կոչ է անում:

Խորհրդային Միության հանրապետությունների բոլոր մայրաքաղաքներում կանգնեցված նմանատիպ արձանները ծառայում էին սոցիալիզմի **գաղափարախոսությանը** և մարդկանց մեջ սերմանում հավատ դեպի պայծառ ապագան:

Գտի՛ր Նիկա աստվածուհու պատկերը Պերգամոնի ռելիեֆի պատկերազարդման մեջ:

Ինչ ես կարծում, պատահակա՞ն է, թե՞ մտածված Դելակրուայի և Մուխինայի հերոս կանանց նմանությունը հին հունական հաղթանակի աստվածուհի Նիկայի պատկերներին:

Աստվածուհի Նիկայի հնագույն ռելիեֆ

Վերա Մուխինա, Բանվորը և կոլտնտեսուհին, 1937 թ.

Էժեն Դելակրուա, «Ազատությունը բարիկադների վրա», 1830 թ.

XX դարի Խորհրդային Վրաստանի ժամանակվա քարոզչական պաստառներ

Խորհրդային Միությունում կար կառավարական բաժին, այսպես կոչված «Ագիտպրոպ»: Նրա նպատակը քարոզչության միջոցով կոմունիստական գաղափարախոսության հաստատումն էր, իսկ քաղաքական նպատակներին հասնելու համար նրանց հիմնական զենքը արվեստն էր: Բաժինը վերահսկում էր տպագիր հրապարակումները, հեռուստատեսությունը, կինոն, թատրոնը, գրականությունը և կերպարվեստը: Ագիտպրոպը սահմանում էր գրաքննություն՝ որոշում, ինչը պետք է հրատարակվեր, և ինչը՝ ոչ:

Ագիտացիոն և քարոզչական աշխատանքներն իրականությունն արտացոլում են գեղեցկացված, մասամբ՝ միակողմանի, ընտրովի: Պարզ ասած, մարդկանց «աչքերին փոշի են փչում», թաքցնում գոյություն ունեցած խնդիրները, ստում են: Նրանց նպատակն է ազդել մարդու քաղաքական ընտրության, որոշման վրա և հակել պատվիրատուի, այսինքն՝ պետության դիրքորոշմանը: Կոչ անելու համար նրանք դիմում են նույն գեղարվեստական միջոցներին: Այսպիսի պաստառների հեղինակներն օգտվում են հասարակության և զանգվածների հոգեբանության իմացությունից և շահարկում են մարդկանց զգացմունքները: Եթե ծանոթ եք նրանց հնարքներին, հեշտությամբ չեք ընկնի նրանց լարած թակարդը:

Ջ.Մ.Ֆլեգ, «Դու ինձ պետք ես ԱՄՆ-ի բանակում», 1917 թ.

Ի. Թոիձե, «Մայր հայրենիքը կանչում է մեզ», 1941 թ.

Բառարան

Ագիտացիա – բանավոր, տպագիր կամ կերպարվեստի միջոցով հասարակության քաղաքական գիտակցության վրա ազդելու, ագիտատորի օգտին նրանց համոզելու փորձ:

Քարոզչություն - հասարակության հայացքների վրա բառացիորեն, կարգախոսով, կերպարվեստի միջոցներով գաղափարական ճնշում: Քարոզչությունը հանրությանը տրամադրում է միայն քաղաքականորեն շահավետ, թերի տեղեկատվություն:

Կարգախոս – կոչ, լակոնիկ, հեշտ մտապահվող արտահայտություն:

Չինաստանի կոմունիստ առաջնորդ, բռնապետ Մաո Ցզե Դուն, 1968 թ.

Գերմանական նացիստական պաստառ Ադոլֆ Հիտլերի պատկերով, 1936 թ.

Ընտրական պաստառներ փողոցում

3 Գտի՛ր տարբեր երկրների գովազդային և ագիտացիոն պաստառներ և դիտարկի՛ր

- Ի՞նչ բովանդակության կոչեր են արտացոլում պաստառները:
- Ի՞նչ ընդհանուր նշաններ եք տեսնում դրանց մեջ:
- Ինչպիսի՞ն են ժեստերը:
- Ո՞ր գույներն են գերակշռում ագիտացիոն պաստառներում և ինչո՞ւ:
- Ի՞նչ գույնի և չափի են մակագրությունները:
- Տեքստը կարճ է, թե՞ երկար: Ինչո՞ւ է դա կարևոր:
- Ի՞նչ բովանդակության է կոչը:
- Ինչո՞վ են տարբերվում ագիտացիոն պաստառները գովազդային պաստառներից:

4 Առաջադրանք

Թվային ալբոմ.
Դիտի՛ր քո շրջապատում փակցված պաստառները և բաներները:
Դրանցից ո՞րն է պարունակում կոչ:
Լուսանկարի՛ր դրանք և վերբեռնի՛ր քո բլոգում:
Կիսվի՛ր հավաքածուի էլեկտրոնային տարբերակով:

Տառատեսակ.
Word-ում գտի՛ր և փորձարկի՛ր վրացերեն տառատեսակի տարբեր նմուշներ:
Ընտրի՛ր այնպիսի տառատեսակ, որը հեռվից հեշտ ընկալելի կլինի: